

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՀՁ-23/1 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Համազգեստ՝ (Արդարադատության պետական խորհրդականի դասային աստիճան ունեցող ծառայողի համապատասխան ուսադիրներով և թևքանշանով) - լրակազմ Գլխարկ հովարով՝ մուգ կապույտ կիսաբրոյա (317գ/մք խտությամբ, 67% բուրդ, 33% Պ/Է) ±3% կտորից, մուգ կապույտ մահուդե (342 գ/քմ 100% բուրդ/) ±3% գլխարկաբուլորքով՝ կարմիր մահուդե եզրաշերտով: Երկու ոսկեգույն փոքր կոճակներով ամրացվում է երկշերտ հյուսված կապը (քուղը)՝ գլխարկաբուլորքի վրա ոսկեգույն ցանցահյուսազարդով: Գլխարկահովարը սև է, լաքապատ: Հովարից վերև՝ գլխարկաբուլորքի վրա, բացի ոսկեգույն լարահյուսից, ամրացվում է կաղնու ճյուղերի տեսքով 2 համաչափ ոսկեկար զարդ՝ 5-տոկոսանոց ոսկե թելերով, որի կենտրոնական մասում զետեղված են Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի խորհրդանիշի շրջանակաձև կենտրոնի երկու արծիվները, սուրը և ոսկեգույնով երիզված վահանը՝ պատված կնգումի (հայկական կզաքիսի) սպիտակ մորթու պատկերով, իսկ գլխարկազագաթի վրա՝ առջևի կենտրոնական մասում, Հայաստանի Հանրապետության ոսկեգույն զինանշանը: Տաբատ/զույգ/՝ մուգ կապույտ գույնի կտորից՝ (166 գ/մք խտությամբ, 60% բուրդ, 40% Պ/Է) ±3%, ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի, գոտին գոտեմակողերով, որոնցից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետևամասի կարի վրա:Գուլֆիկը մշակվում է շղթայով և կոճկվում է երկու կոճակով, արտաքին գրպանները թեք են, հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան: Եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է կարմիր վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով:Տաբատի աստառը մինչև ծնկները հասնող 90 գ/մք ±3% խտությամբ մուգ կապույտ կտորից: Կիտել՝ տոնական սպիտակ(կաթնագույն)</p>

կտորից (166 գ/մք խտությամբ 60% բուրդ, 40% Պ/Է) $\pm 3\%$ (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծավված օձիքով, որի վրա գործվում է անկյունաձև դափնու տերև 5 տոկոսանոց ոսկյա թելերով, սովորական երկկարանի թևքերով, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրոյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրոյա քաթանով: Աստառը՝ 90գ/մք $\pm 3\%$ խտությամբ սպիտակ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն մեծ կոճակներով (<< զինանշանով)՝ տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի: Օձիքն ունի կարմիր եզրաշերտ: Կիտել՝ մուգ կապույտ կտորից (166 գ/մք խտությամբ 60%բուրդ, 40%Պ/Է) $\pm 3\%$, (համապատասխան լրակազմ ուսադիրներով և թևքանշանով), մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, հետ ծավված օձիքով, որի վրա գործվում է անկյունաձև դափնու տերև 5 տոկոսանոց ոսկյա թելերով, սովորական երկկարանի թևքերով, ձախ թևքին կարվում է թևքանշան, որոնք ներքևի հատվածում ունեն 2,5 մմ լայնությամբ կարմիր եզրակար, կողքերից ունեն կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպան: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրոյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրոյա քաթանով: Աստառը՝ 90 գ/մք $\pm 3\%$ խտությամբ մուգ կապույտ կտորից: Երկկոճկուն (երկփեղկ)՝ 6 ոսկեգույն մեծ կոճակներով (<< զինանշանով)՝ տեղադրված երկշարք, թիկնամասի ներքևում՝ առանց կտրվածքի: Օձիքն ունի կարմիր եզրաշերտ: Փողկապ՝ մուգ կապույտ գույնի, ունի լայնացած ուրվագծով ձևվածք: Պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում սուր անկյունով, վերևում՝ մշտական հանգույցով: Փողկապի վրա ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշանը (ձև N 7, նկար 1): Մանրամասների համար օգտվել «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և դրանք կրելու կարգը» սահմանելու մասին ՀՀ կառավարության 04.09.2014թ N-958-Ն և 23.02.2022թ. թիվ 231-Ն որոշումների դրույթներից: Մատակարարը պարտավոր է իր ֆինասական միջոցների հաշվին ներկայացնել ՀՀ-ում հավաստագրված, արտոնագրված կամ Էտալոնային փորձագիտական լաբարատորիայի կողմից տրված գործվածքի բաղադրության վերաբերյալ լաբարատոր հետազոտության եզրակացությունները: • Պահանջվում է անհատական կար յուրաքանչյուրի համար՝ համապատասխան չափի և ձևի ուսադիրների ամրացմամբ: • Արտաքին տեսքը և գործվածքի երանգը նախօրոք պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ: • Արտաքին տեսքը պետք է լինի ըստ ՀՀ քննչական կոմիտեի կողմից հաստատված նմուշի: • Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր համազգեստի չափսերը վերցնել ՀՀ քննչական

Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներում: • Կարված համազգեստի ցանկացած բաղադրիչի չափս
ենթակա է փոփոխման կարողի կողմից տարվա ընթացքում: • Հանդերձանքը պետք է ունենա փաթեթավորում, որի
վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը,
տեսականու անվանումը և ծառայողի անուն ազգանունը: Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների
մատակարարումը իրականացնում է մատակարարը՝ ըստ պատվիրատուի նշված հասցեների:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-
ՀՁ-23/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	